

Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովի լիագումար նիստին

19-րդ ապրիլի, 2011 թ.

<http://www.president.am/hy/press-release/item/2011/04/19/news-1540/>

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մասնակցել է «Դեպի միջտարածաշրջանային համագործակցության նոր ձեռքբերումներ հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում» առաջին հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի լիագումար նիստին:



Համաժողովին մասնակցել են նաև Ռուսաստանի Դաշնության նախագահի աշխատակազմի ղեկավար Սերգեյ Նարիշկինը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանը, Տնտեսական համագործակցության հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահներ՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և ՌԴ տրանսպորտի նախարար Իգոր Լևիտինը, երկու երկրների նախարարությունների, գերատեսչությունների, ՌԴ ավելի քան 20 սուբյեկտների և ՀՀ մարզերի ներկայացուցիչներ, գործարարներ, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանրապետության ղեկավարը ողջունել է համաժողովի մասնակիցներին, ընդգծելով, որ այս մասշտաբային միջոցառումը, որը Երևանում է հավաքել երկու երկրների պետական կառավարման կենտրոնական և տարածաշրջանային մարմինների ղեկավարությանը, գործարար համայնքի և հասարակայնության ներկայացուցիչներին, Հայաստանում անցկացվում է առաջին անգամ: Նախագահի խոսքով, համաժողովի նկատմամբ հետաքրքրությունն այս հանգամանքով չէ միայն պայմանավորված: Այն, առաջին հերթին, թելադրված է հայ-ռուսական գործընկերության առանձնահատուկ դաշնակցային բնույթով և, իհարկե, սերտ կապերը հետագայում ևս զարգացնելու և պարզապես բարեկամություն անելու մարդկանց անկեղծ ձգտումով, ինչպես վայել է հին ու լավ բարեկամներին:

«Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ մեր հանդիպումների պարբերական բնույթը, միջպետական համագործակցության բոլոր մակարդակներում առկա մշտական կապերը հաստատում են լայն սպեկտրով՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ հումանիտար ոլորտներում փոխգործակցության զարգացման երկկողմ ձգտումը:

Հայաստանում գործում է շուրջ 1400 ձեռնարկություն՝ հայ-ռուսական կամ ամբողջովին ռուսական կապիտալով: Ներդրումային պորտֆելի ծավալը մոտենում է երեք մլրդ դոլարի: Եվ այդ ցուցանիշներն աճի միտում ունեն, այն դեպքում, երբ համաշխարհային տնտեսությունը դեռ չի վերականգնվել ճգնաժամի հետևանքներից: Առավել ևս ակնհայտ է, որ պոտենցիալ հնարավորություններն զգալիորեն լայն են, քան այն արդյունքը, որն այսօր մենք ունենք:

Այսպիսի ներուժ և հեռանկարներ մենք տեսնում ենք մեր երկրների տարածաշրջանների միջև կապերի զարգացման մեջ: Այսօր արդեն միջտարածաշրջանային համագործակցության մեջ ներգրավված են Հայաստանի բոլոր մարզերը և Ռուսաստանի Դաշնության ավելի քան 70 սուբյեկտ: Իսկ դա նշանակում է, որ այդպիսի հարթակը պահանջված է, այն օժանդակում է գործնական հարցերի լուծմանը, խթանում՝ նոր ներդրումների և տեխնոլոգիաների ներգրավումը, նորարարությունների աճը», -ասել է Հանրապետության ղեկավարը:

Նախագահ Սերժ Սարգսյանը և ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Սերգեյ Նարիշկինն այցելել են նաև մարզահամերգային համալիրում բացված արդյունաբերական նորարարությունների հայ-ռուսական միջտարածաշրջանային ցուցահանդես, որտեղ առաջին անգամ ներկայացվում են երկու երկրների բազմաթիվ

նորարարական նախագծեր և տեխնոլոգիաներ:

Ցուցահանդեսը դիտելուց հետո ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանը և ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Սերգեյ Նարիշկինը ներկա են գտնվել միջկառավարական և միջտարածաշրջանային մակարդակներում երկու երկրների միջև համագործակցության զարգացմանը վերաբերող մի շարք երկկողմ փաստաթղթերի ստորագրման արարողությանը:

Համաժողովի շրջանակներում կազմակերպվել են նաև կլոր սեղաններ, որտեղ քննարկվում են ՀՀ և ՌԴ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում միջտարածաշրջանային կապերի դերին, տրանսպորտի, կապի, հեռահաղորդակցության, տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը, երկկողմ միջտարածաշրջանային կապերի ամրապնդմանն ուղղված համատեղ էներգետիկ ծրագրերին, հումանիտար կապերի ամրապնդմանն ու զբոսաշրջության զարգացման գործում միջտարածաշրջանային համագործակցությանը վերաբերող հարցեր:

Նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի խոսքը հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության առաջին համաժողովին

Հարգելի՛ բարեկամներ,
Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Ողջունում եմ հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության առաջին համաժողովի մասնակիցներին:

Այս մասշտաբային միջոցառումը, որը Երևանում է հավաքել մեր երկրների պետական կառավարման կենտրոնական և տարածաշրջանային մարմինների ղեկավարությանը, գործարար համայնքի և հասարակայնության ներկայացուցիչներին, Հայաստանում անցկացվում է առաջին անգամ: Մակայն համաժողովի նկատմամբ հետաքրքրությունը բնավ այս հանգամանքով չէ միայն պայմանավորված: Այն, առաջին հերթին, թելադրված է հայ-ռուսական

գործընկերության առանձնահատուկ դաշնակցային բնույթով և, իհարկե, սերտ կապերը հետագայում ևս զարգացնելու և պարզապես բարեկամություն անելու մարդկանց անկեղծ ձգտումով, ինչպես վայել է հին ու լավ բարեկամներին:

Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ մեր հանդիպումների պարբերական բնույթը, միջպետական համագործակցության բոլոր մակարդակներում առկա մշտական կապերը հաստատում են լայն սպեկտրով՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ հումանիտար ոլորտներում փոխգործակցության զարգացման երկկողմ ձգտումը: Վստահ եմ, որ հանդիպումների այսպիսի հաճախականությունը, քննարկվող հարցերի լայն օրակարգը ցույց են տալիս կողմերի նպատակաուղղվածությունը՝ կառուցողական արտաքին քաղաքական փոխգործակցության հետագա զարգացման, միջազգային կազմակերպությունների շրջանակում համատեղ ջանքերի և առևտրաշրջանառության մեծացման գործում:

Հայաստանում գործում է շուրջ 1400 ձեռնարկություն՝ հայ-ռուսական կամ ամբողջովին ռուսական կապիտալով: Ներդրումային պորտֆելի ծավալը մոտենում է երեք մլրդ դոլարի: Եվ այդ ցուցանիշներն աճի միտում ունեն, այն դեպքում, երբ համաշխարհային տնտեսությունը դեռ չի վերականգնվել ճգնաժամի հետևանքներից: Առավել ևս ակնհայտ է, որ պոտենցիալ հնարավորություններն զգալիորեն լայն են, քան այն արդյունքը, որն այսօր մենք ունենք:

Այսպիսի ներուժ և հեռանկարներ մենք տեսնում ենք մեր երկրների տարածաշրջանների միջև կապերի զարգացման մեջ: Այսօր արդեն միջտարածաշրջանային համագործակցության մեջ ներգրավված են Հայաստանի բոլոր մարզերը և Ռուսաստանի Դաշնության ավելի քան 70 սուբյեկտ: Իսկ դա նշանակում է, որ այդպիսի հարթակը պահանջված է, այն օժանդակում է գործնական հարցերի լուծմանը, խթանում՝ նոր ներդրումների և տեխնոլոգիաների ներգրավումը, նորարարությունների աճը:

Ավելի ու ավելի բովանդակալից են դառնում կապերը հումանիտար բնագավառում, մշակութային և կրթության, առողջապահության ու զբոսաշրջության ոլորտներում: Այն մեր երկրների ժողովուրդների պատմական հոգևոր ժառանգության պահպանման ու բազմապատկման և ընդհանուր առմամբ՝ հայ-ռուսական հարաբերությունների ներկայնակի բազմազանության հարստացման հնարավորություն է տալիս: Հայաստանը և Ռուսաստանն ունեն օդային հաղորդակցությունների ինտենսիվ ցանց: Ամեն շաբաթ մեր երկրները կապում են ավելի քան հարյուր ավիաչվերթեր՝ տասնյակ ուղղություններով: Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների համար

Հայաստանում հարմարավետ է թե՛ ռուսերեն լեզվով հաղորդակցվելու հանրամատչելիության, թե՛ Ռուսաստանի ու ռուսաստանցիների նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից: Անհրաժեշտ էմ համարում զբոսաշրջության հոսքերի մեծացման որոշակի մեխանիզմների մշակումը՝ կորպորատիվ հանգստի, էկո և պատմամշակութային զբոսաշրջության տարրերի ներգրավմամբ:

Զբոսաշրջությունը կարևոր է նաև նրանով, որ այն մեր երկրների ժողովուրդներին անմիջական շփման հնարավորություն է տալիս, բարձրացնում է փոխվստահության մակարդակը, միմյանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը, իսկ դա կարող է բազմապատկման ազդեցություն ունենալ համագործակցության այլ ոլորտներում ներգործության առումով: Ես կցանկանայի, որպեսզի մեր երկրների կրթական և մշակութային հաստատությունների, բիզնեսին աջակցող կառույցների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև կապերն ակտիվանան:

Մեր միջտարածաշրջանային փոխգործակցության ևս մեկ կարևոր ոլորտ է համատեղ ձեռնարկությունների գործունեությունը, և առաջին հերթին, այն ձեռնարկությունների, որոնք ուղղված են արտադրության մեջ առաջավոր տեխնոլոգիաների և չափորոշիչների ներդրմանը: Տարածաշրջանային իշխանություններին և գործարար կառույցներին անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այս ուղղությանը: Ես վերջերս հայտարարեցի, որ Հայաստանի կառավարությունն աշխատում է նորարարական ձեռնարկությունների համար հատուկ պայմանների ստեղծման ուղղությամբ, և մենք ուրախ կլինենք դիտարկել ռուսական կողմի համապատասխան առաջարկությունները:

Այս ուղղությամբ աշխատանքը, ընդ որում՝ տարածաշրջանների մակարդակով, պետք է ուղղված լինի վարչարարական գործընթացների նշանակալի դյուրացմանը, տեղական հարկային և սահմանափակող միջոցների թուլացմանը՝ ուղիղ կապերի զարգացման ավելի լայն հնարավորությունների ընձեռման նպատակով: Նոր գաղափարները, գիտական մշակումները և նորարարական լուծումները, որոնք լիովին իրականանալի են տարածաշրջանային մակարդակում, չպետք է կորեն բյուրոկրատական լաբիրինթոսում:

Կարծում եմ, որ այսօրվա համաժողովի նշանակությունը նաև գործընկերության փոխընդունելի մոդելների և արդյունավետ ձևերի, կոոպերացիոն կապերի ընդլայնման ոլորտների համատեղ որոնման մեջ է՝ մեր տարածաշրջաններում առկա տնտեսական և մտավոր ներուժի ավելի ամբողջական օգտագործման նպատակով: Այդ իսկ պատճառով համաժողովն իսկապես կրում է բացարձակ գործնական բնույթ,

և դրանում է նրա արժեքավորությունը: Այդ մասին են վկայում և՛ համաժողովին հարմարեցված ցուցահանդեսը, և՛ այսօր ստորագրվելիք համաձայնագրերը, և՛ կլոր սեղանների միանգամայն որոշակի թեմաները:

Որպես վերջաբան, ցանկանում եմ մեր տարածաշրջաններին և սուբյեկտներին մաղթել համակարգված և համատեղ աշխատանք՝ ի շահ մեր երկրների: Մենք հույս ունենք, որ համաժողովը պարբերական կդառնա, և ամեն անգամ կարձանագրենք միջտարածաշրջանային համագործակցության և՛ աշխարհագրության, և՛ բովանդակության ընդլայնում:

ՀՀ Նախագահի մամուլի գրասենյակ

**Ամփոփվեցին հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին
համաժողովի արդյունքները**

20-ը ապրիլի, 2011 թ.

http://www.mta.gov.am/hy/news/item/2011/04/20/news_895/



Լուսանկարը մեկնեց Քաղաքապետի ՀՈՏՈՂՈՐ, որումն արտատպվե է:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը եւ ՌԴ տարածքային զարգացման նախարար Վիկտոր Բասարգինն ապրիլի 19-ին լրագրողներին ներկայացրին "Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածաշրջանային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ" խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովի արդյունքները, հրապարակվեց համաժողովի եզրափակիչ հայտարարությունը, որը ներկայացվում է ստորեւ.

"Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածաշրջանային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ" խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովի մասնակիցների

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. ապրիլի 18-19-ին ՀՀ Նախագահի աշխատակազմի եւ ՌԴ Նախագահի աշխատակազմի աջակցությամբ ու հովանու ներքո, Երեւանում կայացավ 'Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածաշրջանային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ' խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովը:

Համաժողովին մասնակցեցին երկու երկրների ավելի քան 500 ներկայացուցիչներ: Համաժողովի բացմանը ներկա գտնվեց Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը:

Հայկական կողմից միջոցառմանը մասնակցեցին ՀՀ կառավարության, ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարությունները, նախարարությունների եւ գերատեսչությունների ղեկավարներ, մարզպետներ, գործարարներ, փորձագետներ:

Ռուսական կողմից համաժողովին մասնակցեցին ՌԴ Նախագահի աշխատակազմի ղեկավար Ս.Ե.Նարիշկինը, ինչպես նաեւ պետական իշխանության դաշնային ու տարածաշրջանային մարմինների, բիզնես կառույցների ղեկավարներ, ոչ կառավարական կազմակերպությունների, փորձագիտական հանրության ներկայացուցիչներ:

Համաժողովի մասնակիցները համոզմունք հայտնեցին, որ հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների զարգացման ներկա փուլը նոր հեռանկարներ է բացում միջպետական համագործակցության ինտենսիվ խորացման համար բոլոր ոլորտներում, այդ թվում նաեւ միջտարածաշրջանային համագործակցության ոլորտում՝ ի շահ երկու երկրների բարգավաճման եւ ժողովուրդների բարեկեցության:

Համաժողովի ընթացքում կարեւորվեց միջտարածաշրջանային համագործակցության դերը, որը կոչված է նոր լիցք հաղորդելու հայ-ռուսական տնտեսական համագործակցության ծավալմանը, հումանիտար ոլորտում փոխգործակցության

խորացմանը, Հայաստանի եւ Ռուսաստանի ժողովուրդների հոգեւոր ու մշակութային սերտ կապերի պահպանմանն ու ամրապնդմանը: Համաժողովի գլխավոր թեմաներն էին երկու երկրների տարածաշրջանների մակարդակով ուղղակի տնտեսական կապերի ապակենտրոնացված համագործակցության հետագա խորացման եւ զարգացման հարցերը տնտեսական հարցերի լայն սպեկտրով՝ տնտեսություն, ֆինանսական ոլորտ, փոքր եւ միջին բիզնես, զբոսաշրջություն, էներգետիկա, հեռահաղորդակցություններ եւ կապ, արդյունաբերության տարբեր ճյուղերի առաջադեմ տեխնոլոգիաներ, ինչպես նաեւ՝ մշակույթ ու կրթություն: Համաժողովում հատուկ տեղ գրավեցին փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում երկկողմ համագործակցության գործընթացում ավելի ակտիվ ներգրավմանն ուղղված հարցերի քննարկումն ու կոնկրետ քայլերի մշակումը:

Համաժողովի շրջանակներում անցկացվող արդյունաբերական ինովացիաների միջտարածաշրջանային ցուցահանդեսն ի գորու է նոր լիցք հաղորդել միջտարածաշրջանային առեւտրատնտեսական փոխգործակցության առկա հսկայական ներուժի գործնական կիրառմանը, այդ թվում՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որը դիտարկվում է որպես երկրների տնտեսությունների արդիականացմանն ուղղված առաջնային ուղղություններից մեկը: Համագործակցությամբ շահագրգիռ ձեռնարկություններն ու կազմակերպությունները մտքեր փոխանակեցին ինովացիաների բնագավառում իրենց նորագույն մշակումների շուրջ, նախանշեցին համատեղ փոխշահավետ նախագծերում դրանց հետագա կիրառման ուղիները: Համաժողովի ընթացքում ստորագրված 24 երկկողմ փաստաթղթերը՝ տարբեր ոլորտներում համագործակցության մասին համաձայնագրերը եւ հուշագրերը, այդ թվում՝ տնտեսվարող սուբյեկտների մակարդակով, ծանրակշիռ ներդրում ունեցան Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ միջտարածաշրջանային համագործակցության զարգացման գործում:

Համաժողովի մասնակիցները վստահություն են հայտնում միջտարածաշրջանային փոխգործակցության լայն հեռանկարների կապակցությամբ եւ ողջունում փոխշահավետ համագործակցության հետագա խորացման ուղղությամբ Հայաստանի մարզերի ու Ռուսաստանի ռեգիոնների կողմից գործադրվող ջանքերը:

Հաշվի առնելով, որ համաժողովը բացառիկ հնարավորություններ է ընձեռում Հայաստանի մարզերի ու Ռուսաստանի ռեգիոնների միջեւ համագործակցության առկա հնարավորությունների ամրապնդմանն ու նոր հեռանկարների հաստատման համար, թույլ է տալիս որակապես նոր մակարդակի վրա բարձրացնել երկկողմ հարաբերությունների միջտարածաշրջանային ձեւաչափը, համաժողովի մասնակիցները նպատակահարմար են գտնում միջտարածաշրջանային համագործակցության արդիական թեմայով հայ-ռուսական համաժողովների կանոնավոր հիմունքներով անցկացումը:

Կայացած միջոցառման մասնակիցները համոզված են, որ համաժողովը կարող է դառնալ տարածաշրջանների մակարդակով երկկողմ համագործակցության հետագա զարգացման արդյունավետ հարթակ՝ իր ներդրումը բերելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դաշնակցային ռազմավարական փոխգործակցության առավել ամրապնդմանը:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին